

վին քայքայուէին. շատերը սովի և ջրաի մասնուեցան. ճանապարհները խոպանացան, դպրոցը ցաւալի վիճակի մէջ ընկաւ. Տէրութեան պաշտօնեաների փորձը օգնելու թշուառութեան՝ ի դուր անցաւ. Ազգու բնակիչներէց մի քանիսը մի միտք յղացան. որ և առաջարկեցին ամբողջ Հասարակութեանը, այն է բոլորովին թողնել արբեցութիւնը. Ազգութեամբ նրանք մեծ արգելքի հանդիպեցան. բայց վերջապէս հասան իրենց նպատակին. Ազգու ամբողջ Հասարակութիւնը ուխտեց թողնել արբեցութիւնը և հետեւեալ որոշումը կազմեց. Ա) «Մենք Օգուշուրի կղզու բնակիչներս պարտաւորուում ենք հրաժարուել Հասարակութեամբ ոգելից խմիչքների գործածութիւնից և որոշում ենք իսպառ դադարեցնել նորա գնեցն ու տոնելը. Բ) իւրաքանչիւր բնակիչ, որ այս ուխտը չի ստորագրել, այլ կը շարունակի ոգելից խմիչքներ ծախել, գնել կամ խմել, կը մերժուի բոլորովին Հասարակութեան օգնութիւնից և պաշտպանութիւնից. Ազգու վերայ եղած օտարականներն ու պաշտօնեաները նոյնպէս ենթարկուեցան այս որոշման. Այս ուխտը 5 տարի ժամանակով էր կապուած և ամենայն խտութեամբ պահպանեցին նորա իրենց որոշումները. Հետեւեալը ակնհայտ էր. բնակիչների գրութիւնը միանգամայն կերպարանափոխուեցաւ. նորանոր ճանապարհներ բացուեցան, տները որոգուեցան, համայնական արկղը տասնապատիկ աճեց, երկու շտեմարաններ շինուեցան, ուր համայնքի իւրաքանչիւր ընտանիքի համար բաւականաչափ պաշար է պահուում. Հողի մի մասը, որ աւելի պակաս պտղատու էր, լաւ մշակուեցաւ և տարեկան 800 մարկ եկամուտ է բերում հասարակութեան. Գպրոցը ծաղկում է բնակչութիւնը բազմանում. 1889 թ. հասարակութիւնը նորոգեց իւր ուխտը չը նայելով մի բարձր պաշտօնեայի հակառակութեան. Մայր երկրի մի մեծ համայնք հետեւեց նոցա օրինակին.

Մէր էր, թէ մեր համայնքներն էլ նոյն կղանակով արմատախիչ անէին իրենց մէջ երեւան եկող պակասութիւնները.


Մի 2ինացի քրիստոնեայ նորերս մի գիրք է գրել Առնֆուկիոսի, Բուդգայի և Քրիստոսի վարդապետութիւնների վերաբերութեամբ. նա հետեւեալ պատկերներով յոյց է տալիս դոցանից իւրաքանչիւրի արժէքը.

Մի մարդ ընկել էր մի խոր, մթին գրի մէջ, միանգամայն անկարող շարժուելու և գրի կեղտոտ յատակից ազատուելու. Առնֆուկիոսը պէտք է անցներ գրի մօտով. նա մօտեցաւ գրի եզերքին և ա-

սաց. «Խեղճ մարդ, ցաւում եմ քեզ վրայ. Ի՞նչու այնքան անմիտ էիր, որ փոսն ընկար, եթէ քեզ մի խորհուրդ տալ կարող եմ: այն է, որ եթէ դուրս գալու լինիս, այլ ևս մէջը չընկնիս. — Ախ, ես չեմ կարող դուրս գալ, հասաչեց մարդը.

Ապա եկաւ բուդգայական մի քահանայ և ասաց. «Խեղճ մարդ, ցաւում եմ, որ ես քեզ այդտեղ եմ տեսնում. Կարճում եմ, եթէ ճանապարհի մասը, եթէ մինչև իսկ կեսը դէպի վեր սողալ կարողանաս, այն ժամանակ քեզ կարող եմ բռնել և դուրս քաշել. Բայց գրի մէջ ընկած մարդը անկարող էր տեղից շարժուելու.

Բայց ահա գալիս է Փրկիչը, նա լսում է լացի ձայնը և բոլորովին մօտենում է գրի եզերքին. նա ցած է իջնում: բռնում է խեղճ մարդուն և դուրս հանում ասելով «գնա՛, այլ ևս մի մեղանչի՛ր».



ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԵՏՄԵԱԿԱՆ

ՍԵՍՆԵԱՆ ՏԵՐՈՒԹԵԱՆ ՊԵՏՄՈՒԹԻՒՆ.

Թ. Ն Ը Օ Լ Գ Է Զ Ը Ի.

Այն երկրներին որոնց իշխանները երբեմն իրապէս և երբեմն միայն անուանական կերպով պարթեակական «արքայից արքային» հպատակ էին, պատկանում էր նոյնպէս իսկական Պարսկաստանը կամ

1. Հայոց հարեան ազգերից ոչ մէկի պատմութիւնը այնքան սերտ շաղկապուած չէ մեր պատմութեան հետ, որքան Պարսիցը, իսկ Պարսից պատմութիւնից մեծագոյն աղբյուրութիւնն ունի հայկականի հետ Սասանեան շրջանի պատմութիւնը, որի ուսումնասիրութիւնը անհրաժեշտ է հայկական պատմութեան հետազոտութեան համար: Եւրոպական արեւելագէտներից առաջատոր Ասիայի ազգերի քաղաքակրթութեան և լեզուների ուսումնասիրութեան մէջ առաջին տեղը ունի այսօր Ստրասբուրգի համալսարանի ուսուցչապետ Թ. ՆՇՕՂԷՔԷՆ, որ ևս հիշատակական հանրագիտական քառարանի մէջ գրել է Պարսից Աքեմենեան և Սասանեան շրջանների պատմութիւնը: «Encyclopaedia Britannica»-ի յօդուածների գերմաններէն ընթացող ՆՇՕՂԷՔԷՆ հրատարակեց 1887-ին «Aufsätze zur Persischen Geschichte» որից թարգմանում ենք Սասանեան շրջանի պատմութիւնը: Ժամանակ է, որ հայոց պատմութեան ուսումնասիրութիւնը համապատասխանէ արդի գիտութեան պահանջներին, իսկ դրա համար պէտք է գտնէ մի մօտաւոր ծանօթութիւն Հայաստանի սահմանակից ազգերի պատմութեան: Մասամբ միայն այս պէտքը լրացնելու համար է ահա, որ ձեռնարկել ենք այս թարգմանութեանը: Ժամօթ. Թարգմանչի.

Պարսքը. (Փարս, որի հին մայրաքաղաքն էր Պերսեպոլիս—Սասհր, իսկ այժմ Շիրազ), Արշակունիների շրջանում մեզ ծանօթ է այս երկրի թագաւորների մի քանիսի անունը, մասամբ մատենագիրներից, մասամբ էլ դրամներից, սակայն չգիտենք անգամ թէ դրանք ամէնքն արդեօք նոյն հարստութեան են պատկանում թէ ոչ, երրորդ դարու սկզբներում Բրիտտոսից յետոյ, մեծ շիւթութիւն էր տիրում այդ երկրում, երկրի թագաւորների 4 ոյժը բեկուած էր ամենուրեք այս բնութիւնից սաստիկ ճեղքոտուած լեռնային աշխարհում կային մանր իշխաններ, Այս իշխաններից մէկն էր Պապակ կամ Պարակ 2 որդի կամ շառաւիչ Սասանի, Պարակը ծագում էր Շիր գիւղից, որ գտնուում է Շիրազից դէպի արեւելք եղած մեծ աղի լճի հարաւային ափում: 5 Սակարողացաւ այդ իշխանական տան վերջին շառաւիղին, որի անունն էր Գօզեր և որին ինքը առաջ ծառայել էր, գահաձեռնել և տիրել, նախ Սասհրի կամ հին Պերսեպոլիսի շրջակայ երկրին, Սրա որդին դրամների և արձանագրութիւնների վրայ իւր հօրն արդէն «թագաւոր» տիտղոսն է տալիս, Ըստ աւանդութեան, որ անշուշտ այս մասի համար ստոյգ է, սրա օրինական ժառանգն էր իւր Շապուհ որդին, որի համար նա գեռ իւր կենդանութեան ժամանակ իրրե թէ Արշակունի մեծ արքայից թագաւորական թագ է խնդրել, Սակայն նորա միւս որդին Արտաշիր ( Artachir ) : իւր հօր մահուանից յետոյ չհպատակեց եղբորը և դուրս եկաւ նրա դէմ. սակայն նոյն այդ միջոցին մեռաւ Շապուհը, երեւի ոչ պատահաբար, 5 Ար Արտաշիր

հարազատ եղբայրը մի խոչընդոսն էր նրա ճանապարհի վերայ և որ Արտաշիրը սպանել տուաւ նորան ասում է մեզ Սասանեան խիստ օրինապահ աւանդութիւնը բոլորովին որոշ կերպով և այդ մասին մենք կատարեալ անգամ չենք կարող:

Արտաշիր այն դրամները որոնց երեսի վրայ նրա դէմքի պատկերը կայ «Աստուած, Արքայ Արտաքշաթր» վերտառութեամբ և հակառակ կողմում նրա հօր կիսադիմի (en profil) պատկերն է «Արդի Աստուծոյ Պապակ արքայ» արձանագրութիւնով, ծագում են անշուշտ Պապակի մահուանից յետոյ, երբ Արտաշիրն այս դրամները կոխել էր տալիս, արդէն տէր էր իսկական Պարսք երկրի, թերևս նրա հայրն իսկ իւր իշխանութիւնը այդ տեղն էր հասցրել, Աւանդութիւնը յիշում է մի քանի մանր իշխաններ, որոնց Արտաշիրն իւր հօր համար կամ իւր իշխանութեան ժամանակ նուաճել է:

Արտաշիրով սկսուում է Սասանեան տէրութիւնը, ինչպէս որ Աքեմենեան տէրութիւնը սկսուում էր Կիրոսով, որի նախորդներն իսկ արդէն «թագաւորներ» էին, այս իշխանի անունը Արտաքշաթր նոյն այն անունն է, որ յոյները Արտաքսերքսէս էին կոչում, Աւշադրութեան արժանի է այն իրողութիւնը, որ հէնց այստեղ Աքեմենեանների հայրենիքում, որոնց մասին իսկական պարսիկ աւանդութիւնը ոչ մի յիշողութիւն չէ պահել, հին արքայական անունները գործածութեան մէջ էին, որովհետև նախասասանեան շրջանում մի քանի իշխաններ Արտաքսերքսէս և Դարեհ ( Darjaw, Darah, Dara ) են կոչուում, Արտաշիր երեան գայն իրրե թագաւոր մի բաւական հաւանական տեղեկութեան հիման վերայ պէտք է համարել 211—212թ. Բրիտտոսից յետոյ, Պարզ է որ Արտաշիրը նախ յենուեցաւ հոգեւորականութեան վերայ, Զօրաստորի հաւատը մակեդոնական և պարթեական շրջաններում կրէք ընկճուած չէր, ինչպէս շատերը կարծել են, Իսկական Իրանում և մանաւանդ Պերսիս կամ Պարսք երկրում դա մտցել էր իրրե իսկական ժողովրդի կրօն, Պարթե թագաւորներն էլ հետևող են եղել այդ կրօնին, բայց շատերն երեւի ոչ մեծ ջերմեանդութիւնով, Արտաշիրն ընդ հակառակը հէնց սկզբում կրակապաշտութեան նշանն աչքի ընկնող կերպով դրօշմեց իւր դրամների վերայ և պատահած առթիւ, ինչպէս օրինակ իւր արձանագրութիւնների մէջ, խոստովանում էր ինքն իրեն իրրե «Մադդեգն», այսինքն ուղղափառ Զօրաստորեան, այդ բանի մէջ նորան հետևեցին իւր յաջորդները, Այն մեծ ոյժը, որ ունէին

1. Թագաւորական հարստութեան անունը երեւի Բազրանջիկ ( Bazrangik ) էր, թէպէտ եւ այս արտասանութիւնը միայն արաբական գրով է մեզ հասած, ուստի եւ անհաստատ է:
2. Վերջինս նորագոյն կամ նոր պարսկական ծեն է. Բաբակ արաբական ծեն է եւ ոչ պարսկական. առնասարակ Սասանեան պատմութեան անուններիցը նորագոյն արտասանութեան ծեներն եմ ընդունել, որ համապատասխանում են այդ շքանի վախճանին յատուկ եղած ծեներին:
3. Սասանեան պատմութեան այս օրինակ աւանդութեան ապացոյցները կարելի է գտնել ըստ մեծի մասին այն ծանօթութիւնների եւ յաւելումների մէջ, որ կցել եմ Թարսիի արաբական տիեզերական պատմութեան մի մասի իմ Թարգմանութեանս (Geschichte der Araber und Perser zur Zeit der Sasaniden. Leyden 1879 ): Հռովմական պատմութեան յարաբերութիւնների մասին պէտք է համեմատել Տիւլիմնի ( Histoire des Empereurs ) եւ Կիստոքի ( Fasti romani ) ծրրե ջրմաքար ծառայող գործերը:
4. Հայերէն ծեն է Արտաշիր, որ երեւի անելի ստոյգ է եւ համապատասխան պարսկական ջրն ջրման, որի աղաւաղման պատճառներից մէկն էլ արաբական գրութիւնն է եղած: Ժան. Թարգմ.:
5. Ինչպէս աւանդում են, նա Պերսեպոլիս աներակներից վայր թափուած քարերի տակ մտալով սպանուել է:

4. Տես Գուիշման Zeit. d. deutschen morgenl. gesellschaft. 34. 734:

այդ մասամբ խիստ մոլեռանդ և հաղածատեր հոգևորականները Սասանեան տէրութեան մէջ, ըսկիցրն է առնում անշուշտ Արտաշրից: Մինչև անգամ հաւանական է, որ նուիրագետական ստորակարգութիւնը որը շատ նման է բրիտանեական կղերի կազմակերպութեան, ծագումն է առնում նոյն իսկ Արտաշրից. դոնէ այս կազմակերպութեան գոյութեան մասին հէնց Արտաշրի անմիջական յաջորդների ժամանակ վկայում են արձանագրութիւնները: Խիստ ուղղափառութիւնը յամենայն դէպս օգնել է այս հարստութեան ժողովրդական և սրբազան դառնալուն: Սակայն Արտաշրի յաջորդութիւնը անկասկած հետեանք էր նրա անձնական գործունէութեան և արիւթեան: Ար Արտաշիրը դառն աշխատանք է թափել Պերսիսի իշխանից «Իրանի արքայից արքայ» դառնալու համար: այդ խոստովանում է և ւանդութիւնը:

Նա նախ նուաճեց իւր երկրի արևելակողմը գտնուած Վիրման գաւառը, ապա Սուզիանան, յետոյ Տիգրիսի գետաբերանի շրջակայքի մանր թագաւորութիւնները: Առաջին ընդդիմութիւնը ցոյց տուին նրան գլխաւորապէս տեղացի իշխանները և ոչ իւր մեծամեծներով և նախարարներով չափազանց սահմանափակուած պարթևութեան թագաւորը: Վերջապէս հասաւ և սրա հետ կուսելու ժամը: Ժամանակակից պատմագիր Դիոն Ասիոսը աւանդում է՝ թէ Արտաշիրը պարթևներին յաղթեց երկը ճակատամարտներում: վճռական ճակատամարտը պարթևական վերջին թագաւորի Արգաւանի օրով (Արտարան, Արտաւան) տեղի ունեցաւ հաւանօրէն 224-ին ապրիլի 28-ին: Այս ճակատամարտում ընկաւ Արտաւանը: Այդ օրուանից սկսուած Արտաշիրն ինքն իրեն «արքայից արքայ» կոչեց, որպէս հնագոյն ժամանակներից կոչուում էին առաջաւոր Ասիայի մեծ տէրութիւնների իշխողները:

Վճռական ճակատամարտը տեղի ունեցաւ բոլոր նշաններին նայելով Բարիլոնիայում կամ Պուզիայում: Սորան համաձայն է և Դիոն Ասիոսի աւանդածը, որով Արտաշրի առաջին ձեռնարկութիւնը այս ճակատամարտից յետոյ ուղղուած էր Միջագետքի անապատի մէջ գտնուած Հաթրայի դէմ: ուր, բոլորովին մտփկ պարթևական մայրաքաղաքին, մի փոքրիկ անկախ տէրութիւն էր կազմուել, Հաթրայի պարիսպների առաջ, որոնց ամրութիւնը այսօր իսկ ահագին աւերակներից կարելի է ճանաչել: Արտաշրի թափն առաջին անգամ խորտակուեց. այսու ամենայնիւ նա ինքը կամ իւր յաջորդը քիչ ժամանակ գրանից յետոյ առան այդ ամրոցը և կործանեցին: Նա յաջողութեամբ տիրեց Մարաստանին, ուր Արշակունիների շառաւիղիցը մէկը նորա

ընդդէմ էր դուրս եկել, նոյնպէս և Իրանի բարձրաւանգակի մեծագոյն մասին, սակայն ոչ Հայաստանին, ուր ապաւինել էին Արտաւանի որդիքը: 1

Հռովմայեցիք Արտաշրի զօրանալը կատարանքով էին դիտում: Արտաշրի նպատակն էր անշուշտ իյել Հռովմայեցիներից ինչքան կարելի է շատ մասը նրանց ասիական երկրների: Սկզբնաբում յաջող էր Արտաշրի գործը, բայց երբ Ալէքսանդր Սեւերոսը նրա առաջ դուրս եկաւ, (233 թ.) նա ստիպուեց յետ քաշուել: 2

Հէնց սկզբից Հռովմի հետ յարաբերութիւնը որոշում է Սասանեան տէրութեան պատմութեան ընթացքը: Երկու կողմերը յաճախ խաղաղութեան գաշն են կապում միմեանց հետ, սակայն միմեանց միշտ հակառակորդներ են համարում, այն էլ հզօր հակառակորդներ: Արի իշխանների ներքոյ և ներքին քիչ շատ ամենիլ հանգամանքներում Հռովմը (և Բիւզանդիան) կարողանում է եւրոպացիների հին գերակշռութիւնը ասիացիների վրայ պահպանել, սակայն յաճախ հանգամանքները այլ կերպ են անօրինում և Հռովմի անունը խայտառակութեան են մատնում պարսիկները, այսու ամենայնիւ քաղաքակրթական ազդեցութիւնը մտաւորապէս ևս շատ բարձր կանգնած արևմուտքի այս ժամանակամիջոցում շատ մեծ էր պարսիկների վրայ, թէ տէրու-

1. Հայկական պատմութեան մէջ ոչինչ յիշատակութիւն չը կայ Արտաւանի որոց Հայաստան փախելու մասին, եթէ Ասակի կեղծեալ փախուստը չը համարենք այս իրողութեան յեղաշրջումը: Հայկական աւանդութիւնով Հայաստանին տիրել է նոյն ինքն Արտաշիրը, որին հակառակ է սակայն արտաքին պատմութիւնը: Հայոց պատմութեան եւ ժամանակագրութեան ամենից խառնաշփոթ մասը Խոսրովի եւ Տրդատի թագաւորութիւնների շրջան է, շրմայելով, որ այդ շրջանի պատմութեան աղբիւրները համեմատաբար անեղ շատ են եւ ժամանակով մերձատր: Ժան. Թարգմ:

2. Տես մասնաւոր Lampridius, Alex. Sev. 56. որ վաւերաթղթեր է վկայութեան կոչում (որոնց բառացի ընագիտները յիւրաի նրա յառաջ քերած ծեւով իսկական շեն կարող լինել) եւ Մինիւլտո 557. Դ. Արդէն Տիւլմնը այն կարծիքի էր, որ Հռովմայեցիք են յաղթել Համմոյոս. Krebs-ի փոքրիկ շարադրութիւնը. De Severi Alexandri bello contra Persas gesto (Düsseldorf 1847), որ դրամների վերտառութիւններ էլ վկայութիւն է կոչում: Այսպէս է ընդունում եւ Յիլնտընը: Օսրոյեմացոց (Ուսայեցոց) գեղերի հաւատարմութիւնը Ալ. Սեւերոսին նրանով է բացատրում, որ կայսրն ազատել էր նրանց երկիքը պարսիկներից (Capitolinus, Maximinus c. 11). Միւս քննադատութեան հետեւանց է եք նորերը Օր. Բ. Գ. Իսաուլըսըն եւ Եպիգնը ծարտարախօս Հերովդոսանին են հետեւում, որ մի բոլորովին վիպական եւ աշխարհագրական տեսակետով անհնթեթ գեղեցումն է տալիս, որի համամայն պարսից թագաւորն իրել է յաղթել է: նոյն ինքն Մոմզէնը չափազանց հաւատ է ընծայում սրան:

Թեան և թէ զօրքի կաղմակերպութեան, թէ արուեստների և թէ արհեստների մէջ:

Տէրութեան մայրաքաղաք տեսականապէս մնաց զարձեայ Սասհրը, ինչպէս երբեմն Պերսեպոլիսը: Այնտեղ էր արքունի տան կրակատունը, ուր և ի միջի այլոց կախ էին արած յաղթուած օտար թագաւորների գլուխները: Բայց իսկական մայրաքաղաք մնացին Տիզբոնը, Արշակունիների մայրաքաղաքը, և միայն Տիգրիսով նրանից բաժանուած: Արտաշիի ձեռքով նոր հիմնարկուած Սելեկիան, որ նա կոչել էր Վեհ-Արտաշի: Այն հարուստ երկիրն, ուր այս երկրորեակ քաղաքները շինուած էին, ոչ աշխարհագրական և ոչ ազգագրական տեսակէտով այլ ևս Իւրանին չէր պատկանում: որովհետեւ զա գլխաւորաբար սեմական ցեղին պատկանող ժողովուրդներով բնակեցրած մի հարթութիւն էր, ուր որ տէրութեան կենդրոնը փոխադրելու առիթ էր տուել նախկին թագաւորութիւնների օրինակը, ինչպէս և Տրոսովեական երկրների մերձաւորութիւնը: Թէ Արտաշիի իւր կեանքի վախճանում ի՞նչ երկիրների էր տիրում: ստոյգը յայտնի չէ: Պարսից ազգային աւանդութիւնը չափազանցութեան մէջ է ընկնում: այնպիսի երկրների տիրապետութիւնը յատկացնելով նրան, որ նուաճուած են նրա յաջորդների ժամանակ միայն և կամ երբէք Սասանեան տէրութեան չեն պատկանել: նրա որդի Շապուհը արձանագրութիւնների մէջ իրեն կոչում է «Արքայից արքայ Իրանի և Ան-Իրանի»: իսկ իւր հօրը լով «Արքայից արքայ Իրանի»—որանից պէտք է հետևացնել, որ Շապուհը առաջին անգամ տէրութեան սահմանները տարածեց այն երկրիցը դուրս, որ իւր ժամանակը Իրան էր կոչուում: այս կարող է վերաբերել Հայաստանին: ինչպէս և արևելքի հետաւոր երկրներին, ուր սակայն Սասանեան իշխանութիւնը երբէք այնքան հեռու չէ տարածուել, որքան Աքեմենեանը: Յամենայն դէպս Արտաշիի մի մեծ տէրութիւն էր նուաճել և զանազան երկիրներ այնպէս շաղկապել, որ 400 տարի սերտ կապուած մնացին միմեանց հետ: նա քանդեց ինչքան կարողացաւ աւատական իշխանութիւնների սիստեմը, որ պարթևական տէրութեան մէջ հետզհետէ կաղմակերպուել էր, և դորանց փոխարինեց դաւաճների: Աւստի անիրաւացի չէ պարսկական այն աւանդութիւնը, որ Արտաշիին համարում է Իրանի միութեան վերականգնող: |

1. Չէ պէտք սակայն կարծել, որ պարսիկները որ եւ է պարզ յեղողութիւն են ունեցել Աքեմենեան տէրութեան զօրութեան և մեծութեան մասին: Եւրոպացի մատնագիրները, որ Աքեմենեան տէրութեան մասին գիտէին դասական գրականութիւնից, իրենց կարծիքները այդ

Ի հարկէ այս միութիւնը չը պէտք է համարել մի այնպիսի միութիւն, որպիսին կայ այժմեան նորագոյն եւրոպական տէրութիւնների մէջ: Յատկապէս մեծ նախարարները դեռ ևս բաւական դժուարեմէն և շատ անգամ թագաւորների համար փտանգաւոր դարձան: Հին Պարթևական ազնուականութիւնը դեռ ևս մնաց: Դա բաժանուում էր մի քանի դասակարգերի, որոնցից գլխաւորներն են ինչպէս Աքեմենեանց ժամանակներում: եօթն նշանաւոր ցեղերը: Բացի դրանցից կար և մի բազմութիւ մանր կալուածատէր գիւղական ազնուականութեան դասակարգ:

Արտաշիին իրրեւ հիմնադիր տէրութեան յետագայ սերնդի մէջ համարուած է ինչպէս ամենալաւ օրէնսդիրը և նախատիպը լաւ թագաւորի: որ մտգակրօնութեան պաշտպանը մի շատ բարեպաշտ մարդ էր համարուում: այդ ինքն ըստ ինքեան հասկանալի է: Յետագայ ժամանակներում նրան վերագրել են մինչև անգամ իմաստութեամբ և տաքինութեամբ լի երկիր: Անշուշտ Արտաշիի մի շատ նշանաւոր մարդ էր: սակայն այն իշխանը, որ իւր զօրձուէութիւնը սկսել է կրայրասպանութեամբ և որի մասին գոնէ աւանդութիւնն այն վայրենութիւնն է պատմում: որ նա մեռած մեծ արքայ Արտաւանի գլուխը ոտների տակ կոխոտել է: կարող է ամենայն ինչ լինել, բայց ոչ առաքինութեան տիպար:

Հետաքրքրական է, որ պարսկական այս երկրորդ տէրութեան հիմնադրի մասին ևս նոյնպիսի զարմանահրաշ և վիպական աւանդութիւն է կաղմուել ինչպէս և Վիրտուի: Այսպէս՝ սա էլ իրրեւ թէ մի ստոր ծագման մարդու որդի է եղել և Արտաւանի տանը ծառայ, ինչպէս Վիրտուը Աժդահակի տանն ևն: Երազներն և նախադուշակութիւնները երկուսի վերաբերութեամբ էլ մեծ դեր են խաղում: Մինչև անգամ զուտ առասպելաբանութիւններ են պատմում: որ իրրեւ նա մի վիշապի հետ կուռել է:

Ժամանակուայ պարսկների քերանն են դնում հարկաւ սասանեաններից մէկը միւսը լսած կըլինէր յոյսերից կամ ստորիներից որ եւ է քան այդ մասին, ինչպէս իրենց նախնից երբեմն մննչն Կ. Պոլիս իշխել են, բայց սա մի կննդանի աւանդութիւն չէր արեւելքում: Կրթուած արեւմուտքից ընդհակառակն իստոնում են երբեմն իրաւ է հին տէրութեան հանգամանքները իրենց ժամանակակից հանգամանքների հետ և մեծ գիտնական Լիդանիուսը կարծում է օրինակ, որ Եօլը իւր ժամանակակից Եստուռի մայրաքաղաքն է, որովհետեւ նա զարոցում սովորել էր, որ դա է Քսենքսէսի եւ Արտաքսէրսի մայրաքաղաքը:

Սասանեանները սակայն իրենց համարում էին յաջորդներ եւ շտաւաիդներ իրանի առասպելական նախնի Թագաւորների:

1. Մի համառօտ քաղուածք Արտաշիի վիպասունական պատմութիւնից մեզ է հասել քնագրի լեզուով (Պահլավիկ) տես այդ հատուածի իմ Թարգմանութիւնս ( « Ge-

Բարերախտաբար իսկական աւանդութիւնը աւելի պատմական է:

Այն տեղեկութիւնը որով Արտաշէրը իւր Շապուհ որդուն վերջին ժամանակներում գահակից է արել իրեն: Հաստատուում է մասամբ այնու, որ դրամներն են գտնուած: որոնց վերայ Արտաշէրի պատկերի հետ միասին կայ և մի երիտասարդի գլխի պատկեր, նա մտել է 241 թ. վերջը կամ 242 թուի սկիզբին:

Շապուհը ( հնագոյն ձևն է Շահապուհը, արևմտեայք անուանում են Սապոր կամ Սապորես ) Ա - ը հաւանականորէն հանդիսով թագաւոր օծուեցաւ 242 թ. մարտի 20-ին: Այն առասպելական աւանդութիւնը որի համաձայն սորա մայրը իրեն թէ մի Արշակունի իշխանուհի է եղել, որին Արտաշէրը Տիգրանի առման ժամանակ իրեն կին էր առել, հակասում է այն հաւանական ստոյգ համարւելին, որի համաձայն Շապուհը պէտք է Արտաւանի ընդդէմ մղած միջոցական ճակատամարտի մէջ քաջագործութիւններ արած լինի, նոյնպէս և հազիւ թէ մի 13—14 տարեկան տղայ Հոռոմի դէմ այնպէս բուռն կերպով պատերազմ ձեռնարկէր: Արդէն Արտաշէրը իւր տէրութեան վերջին տարիներում ( Մարտիմին կայսեր ժամանակ 236 թ. փետրուարից մինչև մօտաւորապէս 238 մայիս ) կռիւը նորից սկսել էր և Մծրինը ( Nisibis ) ու Խառանը ( Kartä ) առել էր այս երկու բերդերի պատճառով շատ անգամ ճակատներ են մղուել Սասանեան շրջանում: Շապուհը 242 թ. մինչև Անտիոք առաջ էր անցել, Ահա ընդ յառաջ դուրս եկաւ Գորգիանոս Գ. կոչւորը, որն անձամբ կամ ճիշտ ասելով որի Տիմէսթիան աները Շապուհին հետ մղեց և յետ առաւ Միջագետքի այդ երկու ամրոցները:

Սա պարսիկներին ջարդեց Ռէշ—Այնայի մտ և կամենում էր արդէն պարսկական մայրաքաղաքներին վերայ արշաւել, Սորա համար նա ընտրեց Եփրատի ճանապարհը ինչպէս յետոյ Յուլիանոսը, Սակայն մերձաւորապէս երկու տէրութիւնների սահմանի վերայ Խարորաս գետի Եփրատի մէջ թափուելու տեղիցը մի փոքր դէպի ներքև, Գորգիանոսին սպանեց իւր թիկնապահների հրամանատարը Փիլիպպոս Արարացին ( 244 թ-ի սկզբներին ), Կայսրասպանը իրեն կայսր հրատարակել տուաւ և շուտով մի խայտառակ դաշն կապեց Շապուհի հետ, որով նա Հայաս-

տանն ու Միջագետքը Շապուհին պէտք է թողած լինի:

Իրաւ մի քանի տարի պատերազմները դատարած են երևում, սակայն 251—52-ին Շապուհը նորից է արշաւում: Այդ միջոցին իսկապէս նա տիրապետում է Հայաստանին, որին մինչև այդ ժամանակ չէր կարողացել տիրել և ստիպում է այդ երկրի թագաւորին, Հոռոմեական տէրութեան սահմանները ապաստանելու: Միմեանց հակասող և հատուկոր տեղեկութիւններից դժուար է իմանալ թէ այդ միջոցում Պարսիկները քանի անգամ արդեօք Ատրիք են մտել: Այս բանը հնարաւոր էր այդ միջոցներին Հոռոմեական տէրութեան սարսափելի խախուտ միջակի պատճառով: Մինչև անգամ մի ասորի Պիւրիադէս անունով պարսիկներին ինքն էր առաջնորդել Անտիոք և նրանց պաշտպանութեան տակ կայսեր տիտղոս էր առել, Աերջապէս Ալաերիանոս կայսրը արշաւեց պարսիկների ընդդէմ: Պատերազմը մի առ ժամանակ երկարեց Միջագետքում: վերջապէս Հոռոմայեցւոց գործերը շատ անյաջող գնացին և տեղի ունեցաւ մեծագոյն խայտառակութիւնը, և կայսրն անձամբ, երեւի Սասիայի մերձակայքում, Շապուհի ձեռքը գերի ընկաւ ( 260 թ. ): Թէ ի՞նչ հանգամանքներում պատահեցաւ այս, անյայտ է մեզ: Յամենայն դէպս նախապէս բանակցութիւններ են տեղի ունեցել, որի ընթացքում Ալաերիանոսը աշխատել է իւր զօրքի և իւր համար ազատութիւն գնել, բայց իզուր, Հոռոմայեցիք սրա պատճառ են համարում դաւաճանութիւնը կամ դաշինքի խախտելը:

Ալաերիանոսի գերի ընկնելուց յետոյ Շապուհն առաջ անցաւ մինչև Փ. Ասիայի խորքերը, ահա այդտեղ նա զօրաւոր դիմադրութեան հանդիպեց: Հոռոմայեցի զօրավար Բալլիստան շատ պարսիկ ջարդեց, բայց ամենամար հարուածը թագաւորն ստացաւ մի Հոռոմեական արևելցւոց, Օդէնաթոսը, որ իշխան էր Ատրակեան անապատի մէջ գտնուած մէծ վաճառաշահ Պալմիրա քաղաքի, նախ Շապուհին գաշնակցութիւն էր առաջարկել, որ Շապուհը արհամարհանօք մերժել էր, Այս բանը բոլորովին հնարաւոր էր այդ միջոցին, որովհետև, թէպէտև Պալմիրան Հոռոմայեցւոց կայսերութեան էր պատկանում, բայց այն միջոցին, երբ կայսրը գերի էր և Հոռոմի իշխանութիւնը արևելքում կոտորուած էր համարուում, կարող էր մի փառասէր արևելցի միտք յղանալ արքայից արքայի գաշնակցու-

schichte des Artachsir i Papakan“ ) արտատպութիւն „Beiträge zur Kunde der Indogermanischen Sprachen“ 4. Bd. Göttingen 1879 ) : նոյն նիւթը մշակել է եւ Փիլոլոգին իւր Եսեսամէի մէջ: Հմմտ. Gutschmid, in Zeitschr. d. DMG. 585 ff.

1. Մանրամասնութիւնները մութն են: Եռասարակ այս Հոռոմա—Պարսկական պատերազմների մասին Գ. րդ դարումը քիւ տեղեկութիւններ ունիցը:

Թիւնով անկախութեան հասնելու և ինքնուրոյն գեր խաղալու: Ինչպէս էլ կուզէ թող լինի տեղագրութեան և հանգամանքներին ծանօթ Օդէնաթիսը յարարելութեան մէջ մտաւ Բայլիստայի հետ, յարձակուեց վերադարձող պարսիկների վերան և մի կատարեալ յաղթութիւն տարաւ նորանց վերայ: Մինչև անգամ արքունի կանանցի մի մասը ընկաւ նորա ձեռքը: Նոյն իսկ Տիգրանը մէկ թէ երկու անգամ պաշարեց:— Լաւանօրէն այս տեղ նոյնը տեղի ունեցաւ, ինչ որ յետոյ ևս պարսկական տէրութիւնը երկարատե արշաւանքների ծախքը չէր կարողանում հոգալ:

Այս արեւելեան տէրութիւնները շնայելով իրենց դաւառների բնական հարստութեան և արքունի գանձարաններում դիզուած հարստութեան, այնու ամենայնիւ աշխարհագրական և պատմական պատճառների շնորհիւ ընդհանրապէս աղքատ են: Մի մեծ և մշտական բանակ չունէին պարսիկները Հռովմայեցւոց պէս: Ժողովրդից հաւաքած ամբոխը պէտք է կրկին յետ տարուէր:

Ահա թէ ինչու համար բազմաթիւ յաղթական արշաւանքները մնում էին առանց տեական հետեւանքի: Զի երևում որ Հապուհը տեական տիրապետութիւններ արած լինի մինչև անգամ Հայաստանը ինչպէս երևում է այդ միջոցներին կրկին անգամ Հռովմայեցւոց գերիշխանութեան տակ էր մտել: Վաղերիանոսը սակայն մնաց Հապուհի ձեռքին և իբրև գերի մնաւ: Գեռ ևս ցոյց են տալիս մեզ բարձրաքանդակ արձանները Պերսիս նահանգի Ժայռերի վրայ քանդակուած, թերևս նոյն իսկ Հռովմեական հպատակների ձեռքով, յաղթական արքայից արքային և գերի կայսեր: Այս դէպքը յիշում է մինչև անգամ պարսկական աւանդութիւնը, որ առհասարակ Արտաշրի անմիջական յաջորդների մասին շատ քիչ պատմական բան գիտէ: Մի քանի բան, որ այդ աւանդութիւնը Հապուհ Ա-ին է վերագրում վերաբերում է իսկապէս Հաբուհ Բ-ին:

Այս թագաւորը մեծամեծ շինութիւններ է արել: Իրաւացի կերպով սորան են վերագրում այն մեծ ջրանցքները Սուլիանայում Հուշտերի մօտ, որոնք ոռոգում են այդ երկիրը և նրան այնքան պտղաբեր դարձնում: Նոյն այդ երկրում նա հիմնել է Գունդ և—Հապուր (Արարեռէն՝ Զունդայի—Սարուր, ասորեռէն՝ Բէթ—Հապար)՝ քաղաքը, որ երբեմն երբեմն արքայանիստ նոյն գերն է խաղացել, ինչ որ Աքեմենեանց ժամանակը դրան մեր-

ձակայ Շօշը, որ Բարեւոնից յետոյ երկրորդ քաղաքըն էր: Ինչպէս որ սա Տիգրանից յետոյ երկրորդն էր: Ար Հապուհը ոչ—Իրանեան երկրների ևս տիրել էր, այդ վերև յիշեցինք: Իրաւամբ սակայն կայսերաց պատմագիրները (Scriptores historiae Augusta) Բահտրիացիներին համարում են այդ ժամանակ անկախ և յաճախ պարսիկներին թշնամի մի ազգ: Նոյնը վերաբերում է և Վազուդիացիներին, (Pollio, Valeianus 1) այսինքն այժմեան Գիլանի Գիլամացի կոչուած լեռնական ցեղերը, որոնց Սասանեանները երբէք չնուաճեցին:

Հապուհի տէրութեան հէնց սկզբները երևան եկաւ Մանին, Մանիքէութեան հիմնադիրը, որ դաւանական տեսակետով Գնոստիկեաններից ամենից հետեւողականը և պատմաբանօրէն ամենից նշանաւոր աղանդն էր: Այս հոգեպաշտ աղանդաւորների ղէմ պարսիկ մոգերը երկար զարեր նոյնչափ եռանդով մաքառեցին, որչափ դուռ քրիստոնէական դաւանութիւնների ընդդէմ:

Հապուհի վերջին օրերին մեծ յեղափոխութիւն տեղի ունեցաւ Հռովմեական արեւելքի գործերի մէջ, Օդէնաթի այրուեւ, Զէնոբիային ինչպէս երևում է Հապուհը Արեւիանոս կայսեր ընդդէմ զմակցեց, սակայն ոչ տոկուն կերպով, երբ կայսրը Պալմիրան առաւ 273 թ. և Հռովմի իշխանութիւնը կրկին այդ երկրներում կանգնեց, երեւի արդէն Հապուհը մեռած էր:

Ինչ չհարկաւ յիշուի:  
 Թարգմ. Ե. Բարամեան.  
  
 Տ Ե Ն 2 Ա Ն Գ Լ.  
 Ծ Ի Լ Լ Ծ Բ Ի Ծ.

Ա՛խ, երանի՛ այս միզապատ  
 խոր անդունդիցն արնելի  
 Դուրս թոչնու ես մի ազատ  
 Ինձ ճանապարհ գտնէի:  
 Մշտականաչ սիրուն զգեստով  
 Ան՛ այնտեղ ըլլուրներ.  
 Ա՛խ, թէ՛ հուժկու ես թեւերով  
 Սըլանայի դէպի վեր:  
 Մի երկնային անդորրութեան  
 Հսում՝ եմ՝ արդ նըազներ,  
 Քաղցր ըտրմի՛նք անուշ զարնան  
 Բերում՝ են ինձ մեղմ՝ հովեր:

1. Sehnsucht.

1. Zeitsch. d. deutsch. morgenl. Ges. 31, 51. Գունդանի այս յօդուածը պէտք է առհասարակ աշքի առաջ ունենալ Պարսկա—Հայկական յարաբերութիւնների համար: